

ՀՆՁԱԿՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ.
ՍԿՁԲՆԱԿՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

ՌՈՒԲԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Հայ քաղաքական կուսակցությունների կաղմավորումը XIX դարի վերջին տասնամյակներում Հայ մամուլի պատմության մեջ հանգեցրեց մի նոր երևույթի՝ կուսակցական մամուլի առաջացման, որը դեռևս չի դարձել հատուկ մասնագիտական ուսումնասիրության առարկա: Նման պարբերականների թվին է պատկանում հնչակյան մամուլը և մասնավորապես՝ «Հնչակ» թերթը: «Հնչակի» հրատարակության պատմությունը նրա գոյության առաջին տասը տարում կապված է եղել Ավետիս Նազարբեկյանի անվան հետ:

Ա. Նազարբեկյանը ծնվել է 1866 թվականին Թիֆլիսում՝ ունևոր ընտանիքում: Սովորել է նշանավոր հայագետ Ավետիք Եզեկյանի մոտ, ըստ որում գիտեր ոչ միայն հայերեն դրական լեզուն, այլև նրա բարբառները: Հիանալի տիրապետում էր ռուսերենին, անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, ուներ անժխտելի դրական ընդունակություններ, դրում էր արձակ գործեր և բանաստեղծություններ, արտակարգ հռետոր էր, ուներ համոզելու բանավիճային տաղանդ: Պատանու ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել մորաքրոջ ամուսինը, նշանավոր գրող Մերենցը:

Ավարտելով Թիֆլիսի արական գիմնազիան, Նազարբեկյանը ուսումը շարունակում է Պետերբուրգի համալսարանում: Դեռ Թիֆլիսում եղած ժամանակ նա կապեր էր հաստատել Հայ նարոդնիկների հետ, Պետերբուրգում ամբողջովին տարվել էր նարոդնիկական տարերքով: Երկյուղ կրելով հետապնդումներից, ստիպված էր եղել վտարանդել Ֆրանսիա՝ Փարիզ, որտեղ ընդունվել էր Սորբոնի համալսարանը:

Նազարբեկյանը Փարիզում ծանոթանում է իր հայրենակից, նարոդովուական վտարանդի Մարո Վարդանյանի հետ: 1886 թվականի ամռանն արդեն պսակված զույգը ժամանում է Ժնև, որտեղ ծանոթանում է արևելահայաստանցի երկու երիտասարդների՝ Ռուբեն Խանազատյանի և Գաբրիել Կաֆյանի հետ: Նշված տարիներին այս քառյակի մտքերի տիրակալը անժխտելիորեն «Արմենիան» էր: Ինքը՝ Նազարբեկյանը, Փորթուղալյանի ջերմեռանգ կողմնակիցն էր և «Արմենիայում» հրապարակված առավել սուր թղթակցությունների հեղինակը: Իսկ երբ «Արմենիայում» հնչեց համահայկական հեղափոխական կազմակերպություն ստեղծելու կոչը, Նազարբեկյանը, քառյակի համաձայնությամբ, Փորթուղալյանին հղեց մի ուղերձ, որում առաջարկում էր հիմնադրամ հաստատել կազմակերպության ստեղծմանը օգնելու համար և Փորթուղալյանին ընտրել հիմնադրամի ժամանակավոր գանձապահ:

Փորթուգալյանի պատասխանը ցնցեց Նազարբեկյանին. «Արմենիայի» խմբագիրը պատասխանում էր, որ, հնարավոր չհամարելով իր անձնական մասնակցությունը հեղափոխական կազմակերպությանը, չի կարող դառնալ հիմնադրամի կտակակատար: Նազարբեկյանի առաջին արձագանքը եղավ անկեղծ վրդովման զգացումը. նրա կարծիքով Փորթուգալյանի դիրքավորումը այլ բան չէր, քան դավաճանություն սեփական ժողովրդի նկատմամբ: Նման հուզումնալից ոգով էլ Նազարբեկյանը գրեց մի պամֆլետ «Հայակեր քամելեոնը» խորագրով¹: Այսպիսով ավարտ ստացան Նազարբեկյան-Փորթուգալյան փոխհարաբերությունները:

Աստիճանարար զգացմունքները նահանջեցին երկրորդ պլան՝ իրենց տեղը գիջելով բանականությանը. ուրեմն՝ ի՞նչ անել: Եվ Նազարբեկյանը հանգեց այն եզրակացության, որ անհրաժեշտ է անձամբ ստեղծել համահայկական հեղափոխական կազմակերպություն և անձամբ էլ հրատարակել նրա տպագիր օրգանը: Թերթ հիմնելու, տպարան, տառեր, թուղթ գնելու համար դրամ էր հարկավոր: Խմբի անդամներից միայն Նազարբեկյանն էր վճարունակ, բայց նրա ունեցած ֆինանսներն էլ րավական չէին նման նախաձեռնության համար: Հետագայում Նազարբեկյանը, կարգավորելով ֆինանսական փոխհարաբերությունները ընտանիքի հետ, լրադրի ծախսերը լրիվ հոգաց սեփական միջոցների հաշվին: 1887-1897 թթ. ժամանակամիջոցում նա լրագրի վրա ծախսեց մոտ 20.000 ֆրանկ²: Նազարբեկյանն ու նրա գործակիցները ստիպված էին ժնևում՝ ուսանողական միջավայրում, թատերական ներկայացումներ կազմակերպել կովկասյան թեմաներով, որպեսզի անհրաժեշտ գումար հավաքեն լրագրի կարիքների համար³: Վերջապես պահանջվող դումարը հավաքվեց և ուղարկվեց Վիեննա Մխիթարյանների տեղական միաբանությանը որպես հայերեն տպագրական տառերի պատվեր:

Սաանալով շարվածքը, Նազարբեկյանը հանդիպեց նոր դժվարություն. անհրաժեշտ էր հայերեն տառերը անջատել մեկը մյուսից և դասավորել հայերեն տպագրական տառարկղների մեջ: Նազարբեկյանը չէր պատկերացնում, թե ինչպիսին պետք է լինի այդ տառարկղը: Նրան այդ գործում օգնեց Նազարբեկյանի՝ Փարիզից ժամանած բարեկամ Տիգրան Նավասարդյանը⁴, որն այն ժամանակ Սորբոնի ուսանող էր և հայտնի էր որպես հայ բանահյուսության հավաքող: Այդպես ստեղծվեց տպարանը, որը տեղավորված էր Նազարբեկյանների փոքրիկ բնակարանի խոհանոցի մի անկյունում, վարագույրի հետևում:

Տպագրական գործը Նազարբեկյանը սովորեց նարողովուցիների ժնեի տպարանում: Ծագեց մի նոր խնդիր՝ ինչպես անվանել լրագիրը՝ Եղան առաջարկություններ «Ձանդ» և «Ահազանգ»՝ հենց այդ բառերի իմաստով: Եվ հանկարծ Նազարբեկյանը մի միտք հղացավ «Հնչակ», նկա-

1 «Հայրենիք» ամսագիր, 1927, № 8, էջ 71:

2 «Հնչակ», 1896, № 21, դեկտեմբերի 18:

3 Հիսնամյակ սոց. դեմոկրատ Հնչակյան կուսակցության. Փրովիտենս, 1938, էջ 33:

4 ՀՀ Հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ. ֆ. 4045, ց. 2, գ. 31, թ. 3:

տի ունենալով այն դերը, որ Գերցենի «Կոլոկոլ» օրգանը կատարեց ռուս ժողովրդի զարթոնքի գործում⁵:

1887 թվականի նոյեմբերի 25-ին լույս տեսավ «Հնչակ» թերթի առաջին համարը, որը իրենով նշանավորեց ինչպես առաջին համահայկական հեղափոխական կուսակցության, այնպես էլ հայկական մամուլի պատմության մեջ առաջին կուսակցական տպագիր օրգանի ծնունդը: Լրագրի լույս ընծայման գործի սկիզբը դժվար էր: Նախ և առաջ այն պատճառով, որ թերթի գոյություն առաջին երկու տարում հոգավածների միակ հեղինակը Նազարբեկյանն էր, փաստորեն միայն ինքն էր վարում ամբողջ թերթը, իսկ հրատարակության առաջին տարում ինքն էլ ապահովում էր շարվածքը: Նրա գործակիցները մի քանի անգամ փորձ արեցին հոգավածներ գրել, սակայն հայերեն գրական լեզվի թույլ իմացությունը, իսկ գլխավորը, անհրաժեշտ դիտելիքների բացակայությունը անհաջողություն էին մատնում նրանց այդ փորձերը:

«Հնչակը» թղթակցություններ չէր ստանում Արևմտյան Հայաստանից, ասենք չէր էլ կարող ստանալ: Եվ Նազարբեկյանը, հիանալի տիրապետելով հայերեն բարբառներին, մինչև թղթակիցների լայն ցանցի ստեղծումը, Մուշից, Վանից, Կոստանդնուպոլսից եկած լուրերը քաղում էր ուրիշ թերթերից, դրանք իր լրագրում գետեղելով իբրև բնագրեր: Այն տպավորություն էր ստեղծվում, որ «Հնչակը» գոյություն արդեն առաջին իսկ օրերից թղթակիցների լայն ցանց ուներ տեղերում: Նրա մյուս հնարամտությունն էլ այն էր, որ խուզարկու լրտեսներին մոլորության մեջ գցելու նպատակով դիտավորյալ թաքցնում էր խմբագրության և տպարանի գտնվելու վայրը, ժնևի փոխարեն նշելով Մոնպելյեն, Փարիզը, ինչպես նաև երևակայական հայկական «ազատ տպարանը» Լոնդոնում: Նազարբեկյանը դիմում էր նաև այսպիսի մի հնարամտության. լրագրի վերջին էջում շնորհակալություն էր հայտնում մտացածին անձանց, որոնք իբր դրամական նվիրաբերություններ են ուղարկել թերթին, դրանով իսկ ստեղծելով այն տպավորությունը, որ նորահայտ լրագիրն արդեն ունի կշիռ, հեղինակություն և կողմնակիցներ, որոնց օրինակին հարկավոր է հետևել:

Սկզբնական շրջանում լրագրի ֆինանսավորման խնդիրը անչափ ծանր էր, առավել ևս, որ Նազարբեկյանը առաջնորդվում էր այն սկզբունքով, որ հեղափոխական լրագիրը պետք է լինի անվճար: Մինչդեռ փող էր հարկավոր ոչ միայն լրագիրը տպագրելու, այլև տպաքանակը տարբեր վայրեր ուղարկելու համար, ըստ որում «Հնչակը», «Արմենիայի» օրինակով, Թուրքիա և Ռուսաստան ուղարկվում էր հատուկ բարակ թղթի վրա տպագրված, ծրարների մեջ դրված: Գաղտնապահության նկատառումներից ելնելով, ծրարները ուղարկվում էին Եվրոպայի տարբեր քաղաքներից:

Անթիվ անհամար այդ խնդիրների մեջ երբեմն ժպտում էր նաև հաջողությունը, ըստ որում միանգամայն անսպասելի: Պետք է ասել, որ գրաչար Նազարբեկյանը նկատելիորեն զիջում էր խմբագիր Նազարբեկյանին: Ստեղծագործական, առավել ևս բանաստեղծական խառնվածք ունեցող մարդու համար լրագիրը շարելու գործը հիբավի դժոխային աշխատանք էր:

⁵ Պատմություն ս. դ. Հնչակյան կուսակցության. հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 38:

տանք էր: Նազարբեկյանի ու «Հնչակի» համար ըստի բերմամբ գտնվեց մի որակյալ գրաչար, որը մոտ երեք տարի իր վրա վերցրեց «Հնչակը» շարելու գործը: Դա հայերեն չիմացող վրացի ուսանող եվզենի Վաչաձենն էր, Նազարբեկյանների ու Խանազատյանի բարեկամը: Լինելով հոգևոր սքանչելի հատկությունների տեր մարգ, Վաչաձեն, իմանալով Նազարբեկյանի դժվարությունների մասին, ունենալով լավ գրաչարի հմտություն, սովորեց հայերեն այբուբենը և անվճար շարում էր «Հնչակը»:

Լրագրի հրատարակության վայրերի աշխարհագրությունը բավական ընդարձակ է. Ժնև (1887-1892), Աթենք (1892-1894), Լոնդոն (1894-1904): Տվյալ փաստը բացատրվում է ամենևին էլ ոչ տեղերի փոփոխություն աննպատակ հակումով, այլ լոկ քաղաքական նկատառումներով: Բանն այն է, որ լրագրի խմբագրական մարմինը սկզբում կազմված էր հիմնադիրների թվից, իսկ այնուհետև՝ Հնչական կուսակցության կենտրոնական վարչության անդամներից: Ժնևյան գործունեության հինգ տարուց հետո, երբ կուսակցությունը արդեն վերածվել էր համահայկական հեղափոխական կազմակերպության՝ Թուրքիայում իր մասնաճյուղերի ցանցով, որոշվեց փոխադրվել Աթենք, այդ տարածաշրջանին ավելի մոտ:

Երկամյա գործունեությունը Աթենքում ընթանում էր թուրքական կառավարության գործակալների ահաբեկչության պայմաններում: Կազմակերպվում են տպարանի կողոպուտներ, մահափորձեր են կատարվում խմբագրության անդամների դեմ: Ի լրումն այդ ամենի, թուրքական կառավարությունը մշտական ճնշում էր գործադրում Հունաստանի վրա և կարողացավ հասնել այն բանին, որ հունական իշխանությունները արտաքսեցին Հնչականներին⁶: Երկամյա հարկադիր ընդմիջումից հետո լրագիրը նորից վերսկսեց հրատարակությունը Լոնդոնում, ուր փոխադրվել էր կուսակցության կենտրոնը: Եթե մինչ այդ լրագիրը ամսաթերթ էր, ապա դոյություն լոնդոնյան ժամանակաշրջանում դարձավ երկաթաթերթ:

Լրագիրն ավանդաբար ունեցել է հետեյալ կառուցվածքը. առաջնորդող հոդված, միջազգային կյանք, թղթակցություններ (հայկական կյանք), պաշտոնական հաղորդումներ, դրական տեսություն: Լրագիրը հանգամանորեն լուսաբանում էր արեմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական աղետալի վիճակը՝ օբյեկտիվ տեղեկություններ հաղորդելով հայ բնակչության կեղեքումների, ջարդերի և ցեղասպանության փաստերի, նրա հերոսական ինքնապաշտպանության, Տաճկահայաստանում Հնչական կուսակցության ծավալած հեղափոխական գործունեության վերաբերյալ: «Հնչակի» շնորհիվ միջազգային հասարակայնությունը առաջին անգամ իմացավ Կարինում և Կոստանդնուպոլսում տեղի ունեցած բողոքի ցույցերի, Սասունում, Զեյթունում, Վանում ծավալված կռիվների, հայ ազատագրական պայքարի մասին: «Հնչակը» միջազգային մամուլի տեսություններ էր զետեղում նվիրված Հայկական հարցին՝ արտատպելով առավել կարևոր հոդվածները:

Լինելով կուսակցական մամուլի դասական օրինակ, «Հնչակը» կատարում էր իր ֆունկցիոնալ կոչումը՝ ապահովում էր Հնչական կուսակ-

⁶ «Լրագրի հասարակական գիտություններ», 1993, № 3, էջ 150:

ցուծյան ռազմավարության ու մարտավարության սկզբունքների լայն տարածումը ժողովրդական զանգվածների մեջ: Ուստի մեթոդաբանական առումով հիմնավորված կլինի «Հնչակ» թերթի պատմությունը, ինչպես և ամբողջ Հայ կուսակցական մամուլի պատմությունը քննել հենց այդ կուսակցությունների դադափարաքաղաքական էվոլյուցիայի պատմության հետ ունեցած օրգանական կապի մեջ:

Լրագրի արդեն առաջին համարում «Հրատարակության մասին» առաջնորդող հոդվածում Նազարբեկյանը տալիս էր թերթի ապագա գործունեության սեղմ բանաձևը. «Առաջացնել Հայ ժողովրդի փրկության խնդիրը, փաստաբանել ու պաշտպանել այդ խնդիրը և պատերազմել այդ խնդրի համար»: Այնուհետև, պարզաբանելով այդ բանաձևը, Նազարբեկյանը մատնանշում էր. «Ունենալ ազատ խոսք, իբրև միջոց ազատաբար դիտելու ու քննելու թյուրքահայ ժողովրդային ընդհանրության կյանքի կողմերը, հրապարակ հանելու այն բոլոր թշվառությունները, որ վաղուց դարձել են նրա միակ բաժինը և մատնանիչ անելու այդ ժողովրդի կոչումը, որոշելու այն միջոցներն ու նպատակները, որոնք պիտի տանեն նրան դեպի մեկ ապահով կյանք, դեպի մի կյանք, որ միջոց կունենա ազատ կերպով զարգանալու և ծաղկելու. ահա ընդհանուր խոսքերով այս հրատարակության շարժառիթները»:

Ոչ միայն «Հնչակ» թերթի, այլև ազգային-ազատագրական ամբողջ շարժման համար նշանակալի իրադարձություն եղավ կուսակցություն ծրագրի հրապարակումը լրագրի 1888 թ. 11 և 12-րդ միացյալ համարում (հեղինակ՝ Նազարբեկյան): 1888 թվականի ծրագիրը ուներ ստորագաս երկաստիճան կառուցվածք և փաստորեն բազկացած էր երկու մասից՝ մոտակա և հեռավոր նպատակադրումներից: Մոտակա նպատակը ամբողջովին նվիրված էր ազգային հարցին, ըստ որում դրա գործադրման ոլորտը բացառապես Արևմտյան Հայաստանն էր. «Թյուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատություն և ազգային անկախություն, որոնք և դառնում են մոտակա նպատակ»:

Միայն լուծելով ազգային հարցը, ձեռք բերելով անկախություն և քաղաքական լրիվ իրավունքներ, գտնում էին հնչակյանները, կարելի կլինի կենսագործել մաքսիմում ծրագիրը՝ ապագա հասարակարգի կառուցումը հնչակյան կուսակցության սոցիալական պատկերացումներին համապատասխան:

Հնչակյանները կոնկրետ ի՞նչ միջոցներով էին ցանկանում իրականացնել մոտակա նպատակը: Ծրագիրը մատնանշում էր, որ գրա «միջոցն է հեզափոխությունը, այսինքն՝ պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը թյուրքաց Հայաստանում, գործ դնելով ժողովրդական ապստամբությունը»: Այսպիսով, ծրագրում հստակ որոշված էր ազգային-ազատագրական պայքարի ռազմավարությունը՝ հեզափոխություն, համազգային ապստամբություն:

Իսկ այդ պայքարի մարտավարությունը հետևյալն էր: Ծրագրի առաջին հրատարակության հիմքում գրված էր Ռուսաստանի «Նաըոգնայա վոլյա» կուսակցության գործադիր կոմիտեի ծրագիրը (1879 թ.): Այդ բնութագրությունը պայմանավորված էր ինչպես հնչակյան կուսակցության հիմ-

նադիրների նարողովուական անցյալով, այնպես էլ այն հանգամանքով, որ «Նարողնայա վոլյան» բռնապետության դեմ զինված պայքար մղող ոչ պառլամենտական անլեգալ կուսակցություն լավ ուսումնասիրված միջազգային օրինակ էր: Այս առումով հարկավոր է նշել նարողովուցիների և հնչակյանների մարտավարական զինանոցի նույնականությունը: Նարողովուական գաղափարները սաեղծադործարար զարգացվել էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրներից բխող մի շարք դրույթների ձևով: Պահպանելով հանդերձ նարողովուցիների մարտավարության չորս կետերը՝ պրոպագանդա, ազիտացիա, ահաբեկչություն, կազմակերպություն, դրանք հագեցվել էին շեշտված հայկական բովանդակությամբ: Նարողովուցիների ծրագրից վերցրած գուղահեռների հետ միասին, հնչակյանները առաջ էին քաշում սեփական ինքնօրինակ տակտիկական դրույթներ: Օսմանյան կայսրությունը եղել է ժողովուրդների բանտ և դաժան ճնշման էր ենթարկում ինչպես հայերին, այնպես էլ կայսրության մյուս ազգերին ու ազգություններին: Այդ փաստը չէր կարող արտացոլում չգտնել ծրագրում. «Վաստակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի մյուս բնակիչների ու ցեղերի, որպիսիներ են ասորիները, եգիպտացիները, քյուրդերը և այլն, համակրությունը դեպի հայ հեղափոխական գործը և նրանց աջակցությունն այդ գործում»:

Մարտավարության տեսակետից հնչակյանների ծրագրում կարևոր նշանակություն ուներ մոտակա նպատակի իրացման ժամանակի որոշումը. «Որևէ պատերազմ մղած այս կամ այն օտար պետությամբ թյուրքիայի դեմ՝ պետք է համարել հարմար ըստ հեղափոխականների համար իրենց մոտակա նպատակն իրագործելու»: Հնչակյանների ազգային հայեցակարգը, որը նվիրված էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը թուրքական լծից, ավարտվում էր հետևյալ հեռանկարով. «Թյուրքահայ ժողովրդի ազգային անկախությունն ու քաղաքական ազատությունը ձեռք բերելուց ու հաստատելուց հետո՝ այդպիսի գործությամբ շարունակել ընդհանուր հայության ազատության գործը, ազատել օտարների լծից ռուսահային ու պարսկահային և կազմել այդ երեքից մի դաշնակցական ռամկապետական հանրապետություն, որ համայն հայության համար ճամփա կբացե դիմելու դեպի հեռավոր նպատակը»: Ընդգծենք, որ քաղաքական և ոչ մի կուսակցություն այն ժամանակ, հնչակյան կուսակցությունից բացի, իր առջև խնդիր չէր դնում հասնել ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Ռուսահայաստանի և Պարսկաստանի կազմում գտնվող հայկական հողերի կատարյալ անկախության և դրանք միավորել մեկ հզոր, անկախ ժողովրդավարական պետության մեջ:

Իսկ ո՞րն էր հնչակյանների հեռավոր նպատակը: Ծրագրում ընդգծվում էր սոցիալիստական պատկանելությունը և կուսակցության համապատասխան սոցիալական ընտրությունը. «Հնչակի» խումբն իր հիմնական համոզումներով լինելով սոցիալիստ, այդ հասարակական կազմակերպությունը հայտնվում է նրա իդեալը, նրա հեռավոր նպատակը հայ ժողովրդի ու նրա հայրենիքի վերաբերությամբ»: Պետական կառուցվածքի առումով ծբագիրը կրկնորոշում էր ժողովրդավարական սոցիալիստական պետության նարողնիկական տեսական մոդելը (Օրենսդիր ժողով և այլն):

Այսպիսով, եթե հնչակյան կուսակցությունը հայկական առաջին սոցիալիստական կուսակցությունն էր, ապա նրա տպագիր օրգանն էլ առաջին սոցիալիստական թերթն էր հայ իրականության մեջ: Լրագիրը առանձնահատուկ ավանգ է ներդրել սոցիալիստական գաղափարների տարածման գործում: Անդրադառնալով լրագրի էջերում առաջ քաշվող սոցիալիստական գողափարներին, պետք է ասել, որ այդ գաղափարները սկզբնական շրջանում ուսումնարանների համայնքային սոցիալիզմի շրջանակներից գուրս էին գալիս: Սակայն արդեն 1889 թվականից հնչակյանների սոցիալիստական հայեցակարգը սկսել էր զարգացում ապրել դեպի մարքսիստական ուղղության սոցիալ-դեմոկրատիզմը: Անկախ այդ գաղափարների բովանդակությունից, որը փոփոխվում էր զարգացման ընթացքում, «սոցիալիզմ» հասկացության շրջանառության մեջ դնելը հարստացրեց հայ հասարակական-քաղաքական միտքը:

Որպեսզի լրագրի տվյալ ժամանակաշրջանի գաղափարաքաղաքական պատճիռների մասին պատկերացումը հնարավորին չափ լիակատար լինի, անհրաժեշտ է կանգ առնել Նազարբեկյանի ծրագրային երկու հոդվածների վրա: Դրանցից մեկը՝ «Հայկական գործի մի քանի խնդիրների մասին» վերնագրով, տպագրվել էր «Հնչակի» 1889 թվականի № 4-ում: Դա հայ իրականության մեջ առաջին տեսական հոդվածն էր, որ նվիրված էր պետական անկախության նվաճման համալիր հիմնահարցին և այդ գործընթացում նացիոնալիզմի ունեցած տեղին:

Նազարբեկյանը դնում էր հարցերի լայն շրջան. ինչպիսին են պետական անկախության բնույթն ու բովանդակությունը, ազգայնական է արդյոք ամեն մի ազգային-ազատագրական շարժում, ո՞րն է այն սահմանը, որը ազգայինը բաժանում է ազգայնականից: Պատասխանելով առաջադրված հարցերին, հնչակյանների պարագլուխը միաժամանակ սպառնչ պարզաբանումներ էր տալիս իր կուսակցության դիրքորոշման վերաբերյալ: Նազարբեկյանը, մասնավորապես, դրում էր. «Ինչ է նշանակում ազգային անկախությունը ընդհանրապես: Դա ուրիշ ոչինչ էլ, եթե ոչ՝ միմիայն անջատվել, զատվել թյուրքիայից և ունենալ սեփական հայկական ինքնուրույն կառավարություն: Բայց ինչպիսի՞ կերպարանք պիտի կրե այդ սեփական կառավարությունը, երբ թյուրքահայերի ազգային անկախությունն իրագործվե, — ահա հարցը: Եվ դա ապագայի հարց էլ ամենևին, այլ ներկայի ամենաայրիչ մի հարց: Բանը նրանում էլ, որ հայերս միայն ունենանք սեփական հայկական ինքնուրույն կառավարություն, ինչ կերպարանք էլ թեկուզ նա կրե: Հարցի էությունը նրանումն է, թե՞ որպիսի՞ կերպարանք պիտի կրե այդ կառավարությունը, այսինքն՝ որպիսի՞ քաղաքական կերպերում պիտի ամփոփվե մեր ձեռք բերած ինքնուրույնությունը: Դրանում է գլխավոր հարցը և միմիայն դրանում»: Այնուհետև Նազարբեկյանը եզրակացնում էր, որ հայ ժողովուրդը պետք է ձեռք բերի «ազգային անկախություն և մարդկային ու քաղաքացիական իրավունքներ այնպիսի քաղաքական կերպերով, որոնք ապահովացնեն այդ իրավունքների արդար, ազատ ու լայն դործադրությունը, որոնք հայտնվեն բարանտիա ժողովրդի բազմակողմանի առաջադիմության ու զարգացման»: Հեղինակը նախազգուշացնում էր, «որ կուրացած լով մեր ազգային

անջատման զգացումով... և ի վերջո մեկ անհատական կառավարություններից ազատվելով՝ կընկնենք մեկ ուրիշ, թեկուզ հայ, անհատական կառավարության ձեռքը, որը դարձյալ չարիք է ժողովրդի համար: Այնուհետև նոր ցավ, նորից երազել ազատության մասին»: Ամփոփելով իր խորհրդածությունները, Նազարբեկյանը մատնանշում էր. «Հայկական գործը պարզապես ազգայնական գործ չէ, այլ նա իսկապես մարգկային գործ է, որը թյուրքահայ ազգային անկախության հետ միասին անբաժան կերպով գնում է և՛ քաղաքացիական, և՛ մարգկային ընդարձակ իրավունքներ ձեռք բերելու պահանջը»:

Հողվածի միջով կարմիր թելի նման անցնում էր համամարդկային արժեքների առաջնության միտքը. «Զարգացած հայը չը պիտի զատե, բաժանե հային, հայ ազդը մնացյալ զարգացած մարդկությունից, դարձնելով հային ու նրա ինտերեսները մեկ օազիս այլ ազգերի և նրանց ինտերեսների վերաբերությամբ: Այլ ընդհակառակը նա պիտի աշխատե գտնել, մատնանիչ անել ընդհանուր կայրը հայկական և զարգացած մարդկության ինտերեսների մեջ, նա պետք է աշխատե միախառնել այդ ինտերեսները և հայության ձգտումները դնել հանրամարդկային մեծ ձգտումների շարքը, քանի որ այդ ինտերեսների, այդ ձգտումների վերջնական նպատակն է ոչ թե միմիայն այս կամ այն ազգի, այլ հանրամարդկային բարօրությունը»:

Այս գաղափարների օրգանական շարունակությունը եղավ Նազարբեկյանի այն հողվածը, որը գետեղված էր «Հնչակի» 1891 թվականի № 12-ում: Այստեղ նա արտահայտում էր այն միտքը, որ անհրաժեշտ է միավորել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ջանքերը և կազմակերպել նրանց համընդհանուր ապստամբություն: «Հնչակի» խմբագիրը դրում էր. «Ճնշված ազգերի... ընդհանուր ապստամբությունը ամեն տեսակ բռնության դեմ մի վսեմ, մի սուրբ գործ է և այդ ազգերի միահամուռ ու համերաշխ հեղափոխական գործունեությունը միայն կարող է նրանց փրկել ստրկությունից և տալ նրանց միջոցներ՝ հասնելու իրենց մարդկային կատարյալ զարգացման, ազատության և բարօրության»:

Հետագա որոնումներն ու խորհրդածություններն այդ ուղղությամբ հանգեցրին այն բանին, որ շուտով լրագիրն սկսեց ժողովրդականացնել Արևելքում բոլոր փոքր ազգերի անկախ ֆեդերացիայի մոդելի գաղափարը, երբ վերջիններս ազատագրվեն թուրքական լծից: Երկար ժամանակ գտնվելով մի երկրում, որը ավագագույն ֆեդերացիան էր Եվրոպայում, հնչակյաններն ուսումնասիրում էին ազգային հարցի լուծման շվեյցարական փորձը և, այն գտնելով կառուցողական, դրանով հարստացրին իրենց տեսական գիճանոցը:

Կուսակցությունը, խոսքից անցնելով գործի, Թուրքիայում ստեղծեց մասնաճյուղերի ճյուղավորված ցանց և ակտիվ դործողություններ սկսեց տարածաշրջանում: Ըստ այդմ լրագիրը աստիճանաբար հեռացավ տեսական որոնումների ավանդույթից և դարձավ հեղափոխական ազգային-ազատադրական գործի կոնկրետ պրակտիկայի պրոպագանդայի ու ագիտացիայի խոսսափող: Եվ միայն 1897 թվականին, հանրագումարի բերելով կուսակցության տասնամյա գործունեության արդյունքը, կշռադատելով նվաճումներն ու կորուստները, համեմատելով երեկվա ու այսօրվա օ-

րը, Նազարբեկյանը «Հնչակի» էջերում բարձրացրեց տեսական մի նոր հիմնահարց, որը սերտորեն կապակցված էր պրակտիկայի հետ: Այդ հիմնահարցը ազդային-ազատագրական սլայքարի բարոյախոսութունն էր: Այնպես, ինչպես լեռնային զուլալ գետակը կարող է դառնալ կեղտոտ ու պղտոր հեղեղ, այգպես էլ, եթե հրատապ գործուն միջոցներ չձեռնարկվեն, ազգային հեղափոխությունը կարող է աղտոտվել ու կեղտոտվել սրիկաների կողմից: Ներքին թշնամին անչափ ավելի վտանգավոր է դրսի թշնամուց: Նա չի երևում, թաքնված է, մոտենում է ամենանսպասելի կողմից և դարանակալած կարող է թաքուն հարվածել թիկունքին: Խոսելով հայ ազատագրական շարժման այդ ողբերգական կողմի մասին, իբրև կատարված փաստի, Նազարբեկյանը մասնավորապես գրում էր. «Հեղափոխության ամբիոնի շուրջը կուտակվեցան անթիվ օտարականներ, պարագիտներ, մոգայի, ձևականության ու ֆրազաբանության ստրուկներ, չարչիության, բյուրոկրատական ու գրագրային մկներ ու ցեցեր, բերելով իրենց հետ իրանց հատուկ բարքերը, հայացքներն ու սովորությունները, որոնք բոլորն ապականության տիղմի արդյունքներ են» (1897, № 7): Նազարբեկյանը նկարագրել է մի երևույթ, որը բնորոշ է բոլոր հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների համար, երբ ինչ-որ մի որոշակի փուլում իսկական հեղափոխականները անխուսափելիորեն զուրս էին մղվում կեղծ հեղափոխականների կողմից: Եվ հայ հեղափոխականների բոլոր սերունդների համար որպես ահեղ նախազգուշացում էին հնչում նրա եզրափակիչ խոսքերը. «Հեղափոխության վրա այդպիսիները նայում են իբրև առետրական կամ որևէ պարզ մասնավոր ընկերության կամ արհեստի մի ձեռնարկի վրա, որը կարող են, երբ այդ իրանք հարկ տեսնեն, կամ երբ իրանց հաղթված ու նեղն ընկած զգան, ծախել ավելի զորավորին-բեյերին, փաշաներին, սուլթանին իրան»:

XIX դարի վերջի հնչակյան մամուլի նկարագիրը լրիվ չի լինի, եթե կանդ չառնենք երկու մասնագիտացված հրատարակությունների վրա: Օտարերկրյա մամուլի ուսումնասիրումը Նազարբեկյանի մոտ միտք հղացրեց քաղաքական երգիծանքն օգտագործել ծրագրում հռչակված նպատակներին հասնելու համար: Դեռ 1891 թվականին նա փորձեց լույս րնծայել երգիծական «Ասպարեզ» լրագիրը, բայց իրենից անկախ պատճառներով լրագիրը առաջին համարի լույս րնծայումից հետո չգնաց: Եվ ահա 1894 թվականի մարտին Աթենքում Նազարբեկյանը Պետրոս Մարիմյանի հետ վերջապես իրականացրեց իր վաղեմի մտահղացումը՝ պատկերազարդ երգիծական-քաղաքական միամսյա հանդեսի հրատարակումը: Լրագիրը կոչվում էր «Ապտակ»: Խորագրի ընտրության ու նրա նպատակների մասին հանգամանորեն խոսվում էր նրա առաջին համարում. «Ապտակը» հրատարակելով մենք ուզում ենք հայ հեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զենք՝ երգիծաբանի ապտակը: Այդ ապտակը՝ թաթախված հայ քաջերի արյունով, պետք է հարվածի այն ամենքին, թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակ են հայտնվում նաև հայ ժողովրդի բազմության՝ աշխատավորի, գեղջուկի և բանվորի շահերին»:

Լրագրում առանձնահատուկ տեղ էին գրավում քաղաքական ծաղրանկարները: Իրենց պարզությամբ ու անպաճուճությամբ գրանք գեղարվեստական կատարելության գործեր չէին, բայց այդուհանգերձ իրենց մատչելիությամբ ու համոզականությամբ թափանցում էին ընթերցողներին սիրտը: Եվ այդ գործում մեծ ծառայություն ունեն լրագրի առաջատար ծաղրանկարիչ, իրանահայ Չարլզ Կորմիկը: Լրագիրը գոյություն ունեցավ մինչև 1897 թվականը՝ 1895 թվականից լույս տեսնելով Լոնդոնում:

«Ապտակից» բացի նույն 1894 թվականին Նազարբեկյանը Աթենքում իր կնոջ հետ նախաձեռնեց հրատարակչական մի այլ գործ՝ հրապարակեց «Գաղափարը»: «Հանգես գիտական սոցիալիզմի» ենթավերնագիրը անսովոր էր հայ իրականության համար, քանի որ հրատարակությունը մասնագիտանում էր հայ հասարակությանը արգի սոցիալիստական մտքին ծանոթացնելու գործում: Լրագրի առաջին համարում խմբագրությունը նշում էր. «Մենք ոչ թե հույս ունենք, այլ փորձով գիտենք, որ մեր ցանած սոցիալիստական սերմերը չեն ընկնում մերկ ու ապառաժ քարերի վրա, այլ մտածման նյութ, գաղափար ու հասարակական ուղղություն են տվել և կտան միշտ հայ հեղափոխականին, բանվորին, աշխատավորին, որպես և ազատ մտքի, բարի կամքի տեր ու անկողմնակալ հայերին»:

Լույս էր ընծայվել երկու համար՝ հունիսին ու սեպտեմբերին (երկրորդ համարը հրատարակվել էր Լոնդոնում): Այդ համարներում զետեղված նյութերից նախ և առաջ պետք է նշել միջազգային սոցիալիստական դրականության հայերեն առաջին թարգմանությունները՝ Մարքսի և էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Պոլ Լաֆարգի «Կոմունիզմը և տնտեսական էվոլյուցիան», Իզիդոր Լեեկի «Սոցիալիստական Վարժապետարանը» և այլն: Հետաքրքրություն էին ներկայացնում նաև «Մամուլի տեսությունները», որոնցում Նազարբեկյանը տալիս էր հայ մամուլի էջերում արտահայտված սոցիալ-տնտեսական գաղափարների հանգամանալից վերլուծությունը: Հանդեսում զետեղվում էին նաև դրական-քննադատական էսսեներ, պոեզիա (Նազարբեկյանի բանաստեղծությունները), արձակ (Ատրպետ): Ինչպես և «Ապտակը», «Գաղափարը» նույնպես, ի տարբերություն «Հնչակի», վճարովի հրատարակություն էր:

Այսպիսով, հնչակյան կուսակցության պարբերական մամուլի սկզբնավորման շրջանի պատմության ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգմանը, որ հնչակյան հասարակական-քաղաքական միտքը զարգանում էր ազգային և սոցիալական ազատագրման պայքարի ուղիներով: Երկու այդ ուղղությունները, չփոխելով իրենց բնորոշ հիմնական սկզբունքները, գաղափարապես էվոլյուցիա ապրեցին զարգացման ընթացքում:

ГНЧАКСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ:
ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ

РУБЕН ХУРШУДЯН

Р е з ю м е

Образование армянских политических партий в последние десятилетия XIX века привели к новому явлению в истории армянской печати – появлению партийной печати. Армянская историография до сегодняшнего дня не располагает специальными исследованиями по данной теме. Изучение процесса формирования периодической печати социал-демократической партии Гнчак (основана в 1887 г.) показывает, что развитие гнчакской общественно-политической мысли имело два основных направления – национально-освободительную борьбу против турецкого ига и борьбу за социальное освобождение. Оба направления, не меняя главных принципов, идейно эволюционировали в процессе развития.

THE HENTCHAK PARTY'S PRINTED PRESS: GENESIS

RUBEN KHURSHUDYAN

S u m m a r y

The formation of Armenian political parties during the last decade of the 19th century resulted in the emergence of party press – a new phenomenon in the history of Armenian press. Up to the present Armenian historiography has not at its disposal special researches on the subject. A study of the genesis period of the social-democratic Hentchak Party's press shows that the Hentchak social and political thought developed in two main directions: national-liberation struggle against Turkish yoke and struggle for social liberation. Both directions underwent ideological evolution in the course of their development.